ՄԸՄԲՐԻԷ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՐԿՈՍԵԱՆ

Յունուարի 20-ին հանգեաւ ի Տէր Երուսաղէմի հինգաւորց միաբաններից մէկը՝ Տ. Մամբրէ եպիսկոպոս Մարկոսեան 72 տարեկան հասակում։ Պոլսոյ հայ թերթերն անխտիր յարգանքով են խօսում նորա մասին, մանաւանդ յայտնի գրագէտ Մբրմբրեան էֆէնդին մի ընդարձակ կենսագրական է նուիրել «Մանզումէի էֆքեար» թերթի մէջ, որից և քաղում ենք այս տեղեկութիւնները։

Նա ծնուել է Արաբկիրի գիւղերից մէկում 1835 թ., պատանեկութեան հասակում գնացել է Պոլիս և մտել է 1852 թ. Եսիգուլէի ս. Փրկչի դպրոցը. այնտեղ հմտանալով Ս. Գրոց և հայկաբանութեան, անցել է Երուսաղէմ և ուսուցչութեան պաշտօն է կատարել ժառանգաւորաց դպրոցում Եսայի պատրիարքի օրով։ 1871 թ. վարդապետ է ձեռնադրուել և վանական այլ և այլ պաշտօններ կատարել։ 1885 թ. պատուիրակութեան պաշտօն է ստանձնել իւր միաբանակից Տ. Սահակ վարդապետ Խապայեանի հետ (Սոյ ներկայ Ս. կաթուղիկոսը) Ռուսահայոց մէջ և իւր սրտաբուղխ քարոզներով ու մաքրակրօն բարքով գեղեցիկ տպաւորութիւն թողել ամեն տեղ։ 1885 թ. Տ. Սահակ Ս. կաթուղիկոսի հետ եպիսկոպոս է ձեռնադրուել Մակար կաթուղիկոսի ձեռքով։

Հանգուցեալ սրբազանը գրել է մի գրքոյկ Վարդգէս ծածկանունով «Յառաջադիմութեան մասին», Մոսկուա, 1882։ Բայց նա աւելի նշանաւոր էր իբրև եկեղեցական նկարիչ և բազմաթիւ նկարներ ունի ս. Յակոբայ տաճարի և ուրիշ եկեղեցիների մէջ։ Իւր աւանդապահ, համեստ և սրբակենցաղ վարքով օրինակելի է հանդիսացել Երուսաղէմի միաբանութեան մէջ։ Թող օրհնութեամբ յիշուի նորա յիշատակը։